# Ուղեցույց

*Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ կողմից թողարկված պարտատոմսերում ներդրողների համար*

HSBC

Ձեր բանկն ամբողջ աշխարհում

# Բովանդակություն


**Թողարկվող պարտատոմսերի վերաբերյալ համառոտ տեղեկություններ** 2

**Թողարկող և տեղաբաշխող** 3

**Սպասարկման գրասենյակներ** 3

**Ինչպե՞ս ձեռք բերել Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ի կողմից թողարկված պարտատոմսերը** 4

**Որքա՞ն արժեկտրոնային եկամուտ է վճարվելու և ե՞րբ** 4

**Ինչպե՞ս են մարվելու պարտատոմսերը** 4

**Ինչպե՞ս լրացնել Բաժանորդագրության հայտը** 5

Իրավաբանական անձանց համար 5

Ֆիզիկական անձանց համար 5

**Ինչպե՞ս առաքել Բաժանորդագրության հայտը** 7

**Ինչպե՞ս իրականացնել դրամական միջոցների փոխանցումը** 7

**Հնարավոր միջնորդավճարներ** 7

**Ինչպե՞ս բացել բանկային և/կամ արժեթղթերի հաշիվ** 7

**Ի՞նչ տրամաբանությամբ է իրականացվելու տեղաբաշխումը (պարտատոմսերի վաճառքը ներդրողներին)** 8

**Արդո՞ք հնարավոր է վաճառել պարտատոմսերը երկրորդային շուկայում** 8

**Ի՞նչ հարկեր են վճարվելու արժեկտրոնային եկամտից** 8

**Արդո՞ք պարտատոմսերը երաշխավորված են** 10

**Լրացուցիչ տեղեկություններ** 10

**Ի՞նչ անել եթե Ուղեցույցը չի պատասխանում Ձեր բոլոր հարցերին** 10

## Թողարկվող պարտատոմսերի վերաբերյալ համառոտ տեղեկություններ

| | |
|---|---|
| **Արժեթղթերի դասը՝** | անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային պարտատոմս |
| **Արժեթղթերի ձևը՝** | ոչ փաստաթղթային |
| **Արժեթղթերի քանակը՝** | 10,000 (տաս հազար) հատ |
| **Արժեթղթի անվանական արժեքը (արժույթը)՝** | 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ |
| **Արժեթղթերի թողարկման ընդհանուր ծավալը** | 1,000,000,000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ |
| **Արժեթղթերի եկամտաբերությունը՝** | 9 (ինը) % տարեկան (9,000 ՀՀ դրամ մեկ պարտատոմսի համար) |

## Թողարկող և տեղաբաշխող

**Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ**
Տերյան փ. 66, Երևան, 0009, Հայաստանի Հանրապետություն

Հեռախոս՝ 37410 51 50 00, 51 50 35
Ֆաքս՝ 37410 51 50 01, 51 50 34

Էլ. փոստ՝ hsbc.armenia@hsbc.com
Ինտերնետային կայք՝ www.hsbc.am

## Սպասարկման գրասենյակներ

- **Գլխավոր գրասենյակ**
  ՀՀ, Երևան 0009, Տերյան փողոց 66
- **Հանրապետության հրապարակ մասնաճյուղ**
  ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան փողոց 9
- **Կոմիտաս մասնաճյուղ**
  ՀՀ, Երևան 0033, Կոմիտաս պողոտա 3
- **Տիգրան Մեծ մասնաճյուղ**
  ՀՀ, Երևան 0018, Տիգրան Մեծ պողոտա 31ա
- **Զեյթուն մասնաճյուղ**
  ՀՀ, Երևան 0014, Ներսիսյան փողոց 1
- **Գարեգին Նժդեհ մասնաճյուղ**
  ՀՀ, Երևան 0039, Բագրատունյաց պողոտա 14
- **Նոր Նորք մասնաճյուղ**
  ՀՀ, Երևան 0062, Գայի պողոտա 19/10

# Ինչպե՞ս ձեռք բերել Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ի կողմից թողարկված պարտատոմսերը

Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ի (այսուհետև Բանկ) պարտատոմսերի ձեռք բերման համար ներդրողները պետք է՝

- 2008 թվականի դեկտեմբերի 16-ի ժամը 09:30-ից մինչև հունվարի 10-ի ժամը 18:00-ն ընկած ժամանակահատվածում պատշաճ ձևով ներկայացնեն/առաքեն պարտատոմսերի բաժանորդագրության հայտը (կից ներկայացվում է) բանկի գլխավոր գրասենյակ կամ մասնաճյուղեր վերը նշված հասցեներով
- ունենան բանկային հաշիվ ՀՀ-ում գործող որևէ առևտրային բանկում
- հայտը ներկայացնելուց հետո կատարեն պարտատոմսերի ձեռք բերման համար անհրաժեշտ գումարի վճարում բանկում բացված կորպորատիվ պարտատոմսերի բաժանորդագրության **217072925605001** հաշվին
- ունենան արժեթղթերի (դեպո) հաշիվ արժեթղթերի ՀՀ-ում լիցենզավորված որևէ պահառուի մոտ

## Որքա՞ն արժեկտրոնային եկամուտ է վճարվելու և ե՞րբ

Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի դիմաց վճարվելու է արժեկտրոնային եկամուտ՝ պարտատոմսերի անվանական արժեքի 9% -ի չափով՝ մեկ պարտատոմսի դիմաց 9,000 ՀՀ դրամ (օրենսդրությամբ սահմանված դեպքերում այն կարող է նվազեցվել համապատասխան հարկային վճարումների չափով, տես ***Ի՞նչ հարկեր են վճարվելու արժեկտրոնային եկամտից*** *բաժինը):*
Բանկը 2010 թվականի հունվարի 13-ին հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ ներդրողների համապատասխան բանկային հաշիվներին փոխանցելու է պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնային եկամուտը:

## Ինչպե՞ս են մարվելու պարտատոմսերը

Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը մարվելու են 2010 թվականի հունվարի 13-ին: Պարտատոմսերի գրանցված սեփականատերերին պարտատոմսերի դիմաց վճարումը կիրականացվի մարմանը հաջորդող աշխատանքային օրը՝ պարտատոմսերի անվանական արժեքին հավասար գումարները ներդրողների բանկային համապատասխան հաշիվներին փոխանցելու միջոցով:

# Ինչպե՞ս լրացնել Բաժանորդագրության հայտը

## Իրավաբանական անձանց համար

**«Հայտի ներկայացման (օր, ամիս, տարեթիվ / ժամ, րոպե)»** դաշտերում պետք է նշվի հայտի ներկայացման ամսաթիվը և ժամանակը (րոպեների ճշտությամբ):

### Հաճախորդի մասին տեղեկատվություն

**«Անվանում»** դաշտումներդրողը պետք է նշի իր լրիվ ֆիրմային անվանումը:

**«Գործունեության հասցե»** դաշտում ներդրողը պետք է նշի այն հասցեն, որտեղ կազմակերպությունը ծավալում է իր տնտեսական գործունեությունը

**«Իրավաբանական հասցե»** դաշտում ներդրողը պետք է նշի այն հասցեն, որտեղ կազմակերպությունը գրանցված է

**«Պետական գրանցման համար, գրանցման ամսաթիվ»** դաշտում ներդրողը պետք է նշի իր պետռեգիստրի գրանցման տվյալները՝ գրանցման վկայականի սերիան, համարը, գրանցման ամսաթիվը:

**«ՀՎՀՀ»** դաշտում ներդրողը պետք է նշի իր հարկ վճարողի հաշվառկային համարը:

**«Հայտատուի լիազորված անձի անուն, ազգանուն, պաշտոն և ստորագրություն/կնիք»** դաշտում ներդրողը պետք է նշի լիազորված ներկայացողի անունը, ազգանունը(ները), պաշտոն(ները), ստորագրություն(ներ)ը և դնի կազմակերպության կնիքը՝ առկայության դեպքում:

## Ֆիզիկական անձանց համար

**«Հայտի ներկայացման (օր, ամիս, տարեթիվ / ժամ, րոպե)»** դաշտում պետք է նշվի հայտի ներկայացման ամսաթիվը և ժամանակը (րոպեների ճշտությամբ):

### Հաճախորդի մասին տեղեկատվություն

**«Անուն, ազգանուն»** դաշտում ներդրողը պետք է նշի իր անունը և ազգանունը՝ անձնագրում նշվածին համապատասխան:

**«Անձնագրի տվյալներ»** դաշտում ներդրողը պետք է նշի իր անձնագրի սերիան և համարը, տրման ամսաթիվը:

**«Կացության կարգավիճակ»** դաշտում ներդրողը պետք է նշի իր կարգավիճակը՝ ՀՀ «ռեզիդենտ» կամ «ոչ ռեզիդենտ»:

**«Ներկայիս բնակության հասցե»** դաշտում ներդրողը պետք է նշի տվյալ պահին իր բնակության վայրը:

**«Մշտական հաշվառման հասցե»** դաշտում Ներդրողը պետք է նշի անձնագրում նշված գրանցման վայրը:

**«Հայատառ անուն, ազգանուն և ստորագրություն»** դաշտում Ներդրողը պետք է նշի իր անունը, ազգանունը և ստորագրությունը (անձնագրին համապատասխան):

## Բաժանորդագրության հայտի մնացած բոլոր դաշտերը նույնն են թե ֆիզիկական և թե իրավաբանական անձանց համար.

**«Կապի միջոցներ»** դաշտում Ներդրողը պետք է նշի այն հեռախոսահամարները, ֆաքսը և էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում), որոնցով Բանկը կարող է կապվել Ներդրողի հետ

**«Բանկային հաշվի վավերապայմաններ»** դաշտում Ներդրողը պետք է նշի բանկի անվանումը և իր բանկային հաշվեհամարը այդ բանկում, որտեղից կատարվելու է պարտատոմսերի դիմաց վճարումը, իսկ մարման ժամանակ փոխանցվելու են պարտատոմսերի մարումից առաջացած գումարները և կուտակված արժեկտրոնը (բանկային հաշվի բացակայության դեպքում այն անվճար կարող է բացվել բանկում, տես ***Ինչպե՞ս բացել բանկային և/կամ արժեթղթերի հաշիվ*** բաժինը)

**«Արժեթղթերի հաշվի վավերապայմաններ»** դաշտում Ներդրողը պետք է նշի պահառուական ծառայություններ մատուցող կազմակերպության անվանումը և իր արժեթղթերի հաշվեհամարը այդ կազմակերպությունում, որտեղ կատարվելու է ձեռք բերված պարտատոմսերի հաշվառումը (պարտատոմսերի նկատմամբ Ներդրողի ունեցած իրավունքների ու պարտավորությունների գրանցումը)՝ դրանց շրջանառության ամբողջ ընթացքում (արժեթղթերի հաշվեհամարի բացակայության դեպքում այն անվճար կարող է բացվել բանկում, տես ***Ինչպե՞ս բացել բանկային և/կամ արժեթղթերի հաշիվ*** բաժինը)

**«Պարտատոմսերի քանակը՝ թվերով և տառերով (հատ)»** դաշտում Ներդրողը պետք է նշի Թողարկողի պարտատոմսերի այն քանակը, որը նա կցանկանար ձեռք բերել Թողարկողից

**«Պարտատոմսերի անվանական արժեքը՝ (ՀՀ դրամ) թվերով և տառերով»** դաշտում Ներդրողը պետք է նշի պարտատոմսերի անվանական արժեքի՝ 100,000 ՀՀ դրամ և «Պարտատոմսերի քանակը՝ թվերով և տառերով (հատ)» դաշտում նշված թվի արտադրյալը, որը ցույց է տալիս թե Ներդրողը ինչ ծավալի անվանական արժեքով պարտատոմս է ցանկանում ձեռք բերել Թողարկողից

**Բաժանորդագրության հայտի լրացման հետ կապված հարցեր լինելու դեպքում խնդրում ենք դիմել բանկի աշխատակիցներին բանկի՝ վերը նշված ցանկացած մասնաճյուղում/գրասենյակում:**

## Ինչպե՞ս առաքել Բաժանորդագրության հայտը

Ներդրողները, ովքեր ցանկություն կունենան ձեռք բերել Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ի կողմից թողարկած պարտատոմսերը, պետք է լրացված Բաժանորդագրության հայտը առաքեն բանկի սպասարկման մասնաճյուղեր/գրասենյակներ՝ վերը նշված հասցեներով: Բաժանորդագրության հայտը կհամարվի պատշաճ կերպով առաքված, եթե այն ներկայացվել է առձեռն՝ Բանկի գրասենյակ այցելելով և ստացել է բանկի կողմից առաքման ստացման հաստատում:
Ներդրողների կողմից հայտերը կարող են ներկայացվել բաժանորդագրության ժամկետի աշխատանքային օրվա ընթացքում, երկուշաբթիից ուրբաթ օրերին՝ ժամը 09:30-18:00-ն, շաբաթ օրերին՝ 10:00-14:00:

## Ինչպե՞ս իրականացնել դրամական միջոցների փոխանցումը

Բաժանորդագրության հայտի պատշաճ առաքումից հետո ներդրողները համաձայն Բանկի կողմից հաստատված կարգի, պարտավոր են բանկում բացված պարտատոմսերի բաժանորդագրության հատուկ հաշվին փոխանցել Բաժանորդագրության հայտի «Պարտատոմսերի անվանական արժեքը՝ (ՀՀ դրամ) թվերով և տառերով» դաշտում նշված գումարը: Պարտատոմսերի բաժանորդագրման/ձեռքբերման դիմաց կատարվող վճարումները պետք է իրականացվեն միայն ՀՀ դրամով: Համապատասխան վճարում չիրականացնելու դեպքում ներդրողի կողմից ներկայացված Բաժանորդագրության հայտը համարվելու է անվավեր և չի մասնակցելու բաժանորդագրությանը:

## Հնարավոր միջնորդավճարներ

Ներդրողները պետք է նկատի ունենան, որ այլ բանկերում ունեցած իրենց հաշվարկային հաշիվներից Բաժանորդագրության հաշվին փոխանցում կատարելու ընթացքում իրենց միջոցներով պետք է հոգան նաև հնարավոր բանկային միջնորդավճարները:

## Ինչպե՞ս բացել բանկային և/կամ արժեթղթերի հաշիվ

Բոլոր այն ներդրողները (ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք), ովքեր դեռևս չունեն բանկային և/կամ արժեթղթերի հաշիվ և ցանկություն կհայտնեն «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում բացել բանկային և/կամ արժեթղթերի հաշիվ, կարող են Բաժանորդագրության հայտի Բանկ ներկայացման ժամանակ դիմել բանկի Հաճախորդների սպասարկման բաժին՝ հաշիվների բացման և/կամ պահառուական պայմանագիր կնքելու համար:

## Ի՞նչ տրամաբանությամբ է իրականացվելու տեղաբաշխումը (պարտատոմսերի վաճառքը ներդրողներին)

Բաժանորդագրության և տեղաբաշխման կարգի համաձայն, առաջնահերթ կերպով հայտերը բավարարվում են ըստ դրանց ստացման հերթականության, մինչև թողարկման ամբողջ ծավալի բավարարումը: Եթե բաժանորդագրության ընթացքում վերջին ներկայացված հայտը չի կարող բավարարվել ամբողջությամբ, ապա այն կարող է մասնակի բավարարվել միայն ներդրողի համաձայնությամբ՝ լրացուցիչ, նոր բաժանորդագրության հայտ ներկայացնելու (նշելով բաժանորդագրության նոր գումարը) և նախորդը կողմերի համաձայնությամբ անվավեր ճանաչելու միջոցով (տվյալ դեպքում պարտատոմսերի դիմաց ավել վճարած գումարը ենթակա է վերադարձման ներդրողին՝ նրա կողմից լրացուցիչ նոր բաժանորդագրության հայտի հիման վրա):

## Արդյո՞ք հնարավոր է վաճառել պարտատոմսերը երկրորդային շուկայում

Բանկը նախատեսում է թողարկվող պարտատոմսերը գրանցել և ցուցակել Հայաստանի ֆոնդային բորսայում՝ նպաստակ հետապնդելով ապահովել երկրորդային շուկայում պարտատոմսերի  իրացվելիությունը: Պարտատոմսերի՝ ֆոնդային բորսայում գրանցվելուց հետո Բանկը նախատեսում է կնքել մարքեթ-մեյքերի պայմանագիր, համաձայն որի մարքեթ-մեյքերը, ֆոնդային բորսայի առևտրային հարթակում միաժամանակ ձեռքբերման և վաճառքի մեջ մտնող առաջարկներ ներկայացնելով, պետք է ապահովի դրանց առավել իրացվելիությունը:
Ներդրողը հնարավորություն կստանա անհրաժեշտության դեպքում երկրորդային շուկայում վաճառել ձեռք բերած պարտատոմսերը շուկայական գնով՝ դրանց շրջանառության մեջ եղած ժամանակահատվածում:

## Ի՞նչ հարկեր են վճարվելու արժեկտրոնային եկամտից

Բանկի պարտատոմսերից ստացվող եկամուտները ենթակա են հարկման ըստ հետևյալ հարկատեսակների՝

- Շահութահարկ

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ են վճարում (հարկատու են) Հայաստանի  Հանրապետության ռեզիդենտները (այսուհետ՝ ռեզիդենտ) եւ ոչ ռեզիդենտները՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման

մարմինների, պետական ոչ առեւտրային կազմակերպությունների՝ բյուջետային հատկացումների եւ ամբողջությամբ բյուջե փոխանցվող եկամուտների մասով եւ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով՝

ա) ռեզիդենտ են համարվում Հայաստանի Հանրապետությունում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված) կազմակերպությունները, բացառությամբ սույն կետի «բ» ենթակետում նշված կազմակերպությունների առանձնացված ստորաբաժանումների.

բ) ոչ ռեզիդենտ են համարվում օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունները եւ դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները:

Հարկվող օբյեկտ է համարվում պարտատոմսերի տոկոսները՝ ներառյալ վաճառքից կամ վերավաճառքից ստացված հավելավճարները:

ՀՀ ռեզիդենտների կողմից Շահութահարկի հաշվարկումը և վճարումը կատարվում է ընդհանուր կարգով:

ՀՀ ոչ ռեզիդենտների դեպքում Շահութահարկի հաշվարկումը և վճարումը կատարվում է եկամտի վճարման աղբյուրի մոտ (սվյալ դեպքում բանկի կողմից)՝ հարկվող օբյեկտի նկատմամբ կիրառելով 10% դրույքաչափ:

- Եկամտահարկ

Հայաստանի Հանրապետությունում եկամտահարկ են վճարում (հարկատու են) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ (այսուհետ՝ ռեզիդենտ) եւ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք.

«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում (հունվարի 1-ից մինչեւ դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օր եւ ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը:

Եկամտահարկի մասին ՀՀ օրենքի իմաստով կենսական շահերի կենտրոն է համարվում այն վայրը, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Մասնավորապես համարվում է, որ ֆիզիկական անձի կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, եթե այնտեղ է գտնվում տունը կամ

բնակարանը, որտեղ բնակվում է նրա ընտանիքը եւ գտնվում է նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը, կամ հիմնական տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեության իրականացման վայրը:

Հարկվող օբյեկտ է համարվում պարտատոմսերի տոկոսները, ինչպես նաև վաճառքից կամ վերավաճառքից ստացված հավելավճարները:

Տոկոսների համար եկամտահարկի հաշվարկումը և վճարումը կատարվում է եկամտի վճարման աղբյուրի մոտ (տվյալ դեպքում բանկի կողմից)՝ հարկվող օբյեկտի նկատմամբ կիրառելով 10% դրույքաչափ:

## Արդյո՞ք պարտատոմսերը երաշխավորված են

Պարտատոմսերն ապահովված չեն գույքի գրավով կամ այլ անձանց երաշխավորությամբ, սակայն էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ -ն պատասխանատու է իրեն պատկանող բոլոր ակտիվներով:
Ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին) պատկանող պարտատոմսերը երաշխավորված են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով:

## Լրացուցիչ տեղեկություններ

Բաժանորդագրության հաշվի համարը էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ում հետևյալն է՝ **217072925605001**: Բաժանորդագրության հաշիվը լիովին տարանջատված է Բանկի գործառնական հաշիվներից և չի հանդիսանում վերջինիս սեփականությունը: Բաժանորդագրության հաշիվը միայն նախատեսված է բաժանորդագրության հայտ ներկայացրած ներդրողների դրամական միջոցների ժամանակավոր հաշվառման համար և բացառապես օգտագործվելու է տեղաբաշխման ընթացքում առաջարկվող պարտատոմսերի ձեռք բերման դիմաց կատարվող վճարումներ կատարելու նպատակով:

## Ի՞նչ անել եթե Ուղեցույցը չի պատասխանում Ձեր բոլոր հարցերին

Բանկի աշխատակիցները պարտատոմսերի բաժանորդագրության և շրջանառության ամբողջ ընթացքում ուրախ կլինեն պատասխանելու ներդրողների մոտ առաջացող ցանկացած հարցի՝ պարտատոմսերի բաժանորդագրության, ձեռք բերման, շրջանառության, երկրորդային շուկայում վաճառքի և մարման վերաբերյալ: Ցանկացողները կարող են այցելել բանկ կամ զանգահարել 515000, 515035 հեռախոսահամարներով:

Էյչ-Էս-Բի-Սի Խումբը հանդիսանում է ֆինանսական և բանկային ծառայություններ տրամադրող աշխարհի խոշորագույն կազմակերպություններից մեկը, որի գլխամասային գրասենյակը գտնվում է Լոնդոնում:

Էյչ-Էս-Բի-Սի միջազգային ցանցը ներառում է Եվրոպայի, Ասիայի, Խաղաղօվկիանոսյան ավազանի, Հյուսիսային և Հարավային Ամերիկաների, Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի 85 երկրներում և տարածաշրջաններում գործող ավելի քան 9,500 գրասենյակ:

Էյչ-Էս-Բի-Սի Հոլդինգս փի էլ սի-ի բաժնետոմսերը պատկանում են ավելի քան 100 երկրներում գտնվող 200,000 բաժնետերերի և գնանշվում են Լոնդոնի, Հոնկոնգի, Նյու Յորքի, Փարիզի և Բերմուդայի բորսաներում:

Էյչ-Էս-Բի-Սի-ն մատուցում է համապարփակ ֆինանսական ծառայություններ ավելի քան 100 միլիոն հաճախորդների:

Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ն հիմնադրվել է 1996թ.-ին: Ընկերության բաժնետոմսերի 70%-ը պատկանում է Էյչ-Էս-Բի-Սի Խմբին, իսկ մնացած 30%-ը՝ սփյուռքահայ ներդրողներին:

Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ի բազմատեսակ ծառայություններից օգտվում են ֆիզիկական և իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդները՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

**www.hsbc.am**

Թողարկված է Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ի կողմից
*Լիցենզիա 67. ՀՎՀՀ 02514855*

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0009,
Տերյան փողոց 66

Հեռ 51 50 00
Ֆաքս 51 50 01

ՊՈՒ 12/08 Տպագրված է «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ում
© Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ, 2008. Բոլոր իրավունքները պաշտպանված են.